Հայտերի ներկայացման հրավեր
Հայաստանի Հանրապետություն
22 Հուլիսի, 2016 թ.
Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր
Վարկ No 5398
Պայմանագիր # SPAP II W-1.1.1/1.c

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի ՀՍԾՏԿ-ի կառուցում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել "Ստեփանավանի ՀՍԾՏԿ-ի կառուցում" պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սույնով ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյան Ֆինանսավորման Ծրագրերի կառավարման կենտրոնը հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ Ստեփանավանի ՀՍԾՏԿ-ի կառուցման համար:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Արտասահմանյան Ֆինանսավորման Ծրագրերի կառավարման կենտրոնից և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 09.00 – 18.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ: Փաստաթղթերը (ոչ ամբողջական) տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 50000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով:

Բանկային տվյալներ

Ստացող՝ ԱՖԾԿԿ

ՀՀ ֆինանսերի նախարարություն

Կնետրոնական գանձապետարան

Հաշվի համար: 900000900564

1. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2016 թ-ի հուլիսի 20-ին, ժամը 15:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները

հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

Որակավորման պահանջները ներառում են.

- վերջին հինգ տարիների ընթացքում հաջողությամբ կատարված 960,000,000 դրամի շին. աշխատանքների ծավալ,
- վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն մեկ պայմանագիր՝ քաղաքացիական շենքերի վերակառուցման: Ներկայացվող աշխատանքների արժեքը չպետք է պակաս լինի Հայտի գումարից:
- նվազագույնը 72,000,000 ՀՀ

դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ,

- հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված “Բնակելի, հասարակական և արտադրական”, ”Տրանսպորտային” “Հիդրոտեխնիկական”, ՛՛Կապի՛՛ և “Էներգետիկակ” լիցենզիաներ:
- Պայմանագիրը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ հիմնական տեխնիկաի առկայություն;
- Ծրագրի ղեկավավ/մենեջեր հինգ տարվա աշխատանքային փորձով նմանատիպ բնույթի և ծավալի շինարարական աշխատանքների, առնվազն երեք տարվա մենեձերի փորձով:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի Բանկային Երաշխիքով՝ 20,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարով:

8. Վերոնշյալ հասցեն է՝

ՀՀ ֆինանսների նախարարություն

3-րդ հարկ, Տիգրան Մեծ պողոտա 4,

0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հեռ՝ (374-11) 910 381, 910 592

Ֆաքս՝ (374-10) 54 57 08

Գործադիր տնօրեն՝ Էդգար Ավետյան